

## ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՅՈՒՄՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Անցեալ տարուայ զեկտեմբերի 20-ի օրէնքով վերացուած են Անդրկովկասի հինգ նահանգներու (Քիֆլիսի, Քուիթայիսի, Նրեանի, Գանձակի և Բազուի) ճորտատիրական այն մնացորդները, որոնք ժառանգութիւն են մնացել Աովկասեան զիւղացեական բարենորոգութիւնից: Այս նոր օրէնքը մեր երկրի համար շատ կարեւոր նշանակութիւն ունի, և զարմանալի է որ այդ մասին մեզնում շատ քիչ է խօսուած և գրուած: Ներկայ յօդուածիս նպատակն է պարզարանել և գնահատել այդ օրէնքը: Բայց որպէս զի այս աշխատանքը լրիւ և հասկանալի լինի, պէտք է նախ մի յետադարձ հայեացք ձգել Անդրկովկասի զիւղացեական բարենորոգութեան, ինչպէս և նոր օրէնքի ծագման պատմութեան վրայ:

### I.

Գիւղացեական բարենորոգութիւնն Անդրկովկասում, ինչպէս յայտնի է, նախ ուշ է տեղի ունեցել և երկրորդ՝ բաւական փոփոխուած և ոչ միատեսակ: Անդրկովկասում յայտնի են զիւղացեական երկու բարենորոգութիւն: Մէկը 1864—1865 թուականներից է և վերաբերում է Արացի ճորտ-կալուածատիրական զիւղացիներին (Քիֆլիզի և Քուիթայիսի նահանգներում), իսկ միւսը՝ 1870—1877 թուականներից է և վերաբերւում է բէկական, մելիքական և մասնաւոր անձանց հողերի վրայ ապրող զիւղացիներին (Նրեանի, Գանձակի, Բազուի և մասամբ էլ Քիֆլիզի նահանգներում):

Այս երկու բարենորոգութիւնները՝ համեմատած ուստական զիւղացեական բարենորոգութեան հետ, ունեն մի շարք թերութիւններ. որանց մէջ ի նկատի են առնուած աւելի հողատէրերի, մասնաւոր վրացի ազնուականների շահերը, քան թէ զիւղացիութեան, և քացի այս, որանք բուրոյրովին չեն վերացրել նախաբարենորոգչական յարաբերութիւնները զիւղացիների և կալուածատէրերի մէջ, այլ թողել են բաւական զգալի մնացորդներ, որոնք զիւղացիութեան մեծ ծանրութիւն

էին պատճառում: Եւ այդ մնացորդները միայն այժմ, այս նոր օրէնքով են վերացւում:

1864—1865 թ. բարենորոգութեամբ դիւղացիք, իրաւ է, անձնական ճորտութիւնից ազատոււմ են, բայց անտեսապէս դարձեալ մնում են էնթական հողատիրոջ: Այստեղ տեղը չէ ցոյց տալ այդ բարենորոգութեան պակասաւոր կողմերն <sup>1)</sup> ևս աւելի շուտ կը մտանան շեմ այն ճորտատիրական մնացորդներէ վրայ, որոնք նոր օրէնքով վերացւում են: Բարենորոգութեամբ դիւղացիք անմիջապէս հողի սեփականատէր չեն դառնում: Նախկին ճորտ դիւղացիք իրենց օրէնքով յատկացաւոր հողարժիւնները դնել կարող են միայն կալուածատիրոջ համաձայնութեամբ: Իսկ մինչ այդ նրանք կոչւում են ժամանակաւոր պարտաւորեալ դիւղացիք (временно-обязанн. крестьяне): Այս նշանակում է, որ ազատուած դիւղացիք մինչև իրենց հողարժիւնները դնելը պէտք է գէպի կալուածատէրը մի շարք պարտաւորութիւններ յանձն առնեն:

Այդ պարտաւորութիւնները հետեւեալն են: Պէտք է որոշուի քանի վճարեն կալուածատէրերին իրենց օդատուութեան նուազ հողերի համար: Տուրքի չափն որոշոււմ է երկու կողմերի փոխադարձ համաձայնութեամբ, իսկ երբ այդ չի կայանում, այն ժամանակ օրէնքն է նշանակում: Այսպէս ըստ օրինի անատեղի համար (որը  $\frac{1}{5}$ — $\frac{1}{2}$  գեսետինն է որոշուած) պէտք է վճարել տարեկան մօտ 3-6 ըւրբի, խաղողի այգիներէ բերքի  $\frac{1}{4}$ -ը (միւս այգիներէ տուրքը՝ որոշոււմ է հաշտարար միջնորդը), վարելահողերի բերքի  $\frac{1}{4}$ -ը, խոտատեղիներէ բերքի  $\frac{1}{5}$ -ը: Իսկ անձնական ծառայութիւններից դիւղացից ազատ են: Հողարժիւնները դնելուց յետոյ միայն դիւղացիք դառնում են սեփականատէր, և այդ պարտաւորութիւնները դադարում են:

Դիւղացիք իրենց հողարժիւնները պէտք է դնեն մեծ մասամբ սեփական միջոցներով: Պետութիւնն էլ, ճիշտ է, աջակցում է, փոխառութիւն է տալիս, բայց այդ շատ քիչ է: Նախորդ պետութեան այդ փոխառութիւնը (выкупная ссуда) տրւում է անատեղերը և վարելահողերը դնելու համար և չի տարածւում այգիներէ և այլ հողերի վրայ: Երկրորդ՝ այդ փոխառութիւնը կազմում է հողի արժէքի հազիւ 30%: Այդ փոխառութեան շափը որոշոււմ է հետեւեալ կերպ: Վերցնւում է անատեղի կամ վարելահողի օրէնքով որոշուած տարեկան

1) Орестъ Семинъ. Великая Годовщина. Аграрный вопросъ и крестьянская (крѣпостная) реформа на Кавказѣ. Кіевъ. 1911 г.

ասւրքն, այդ 6 ասկոսով կապիտալիզացիայի է ենթարկուած, այսինքն բազմապատկուած է  $16\frac{2}{5}$ -ով, և ստացած գումարը կազմում է պետութեան կողմից արուելիք փոխառութիւնը: Պետութեան արուելիք փոխառութիւնը մի դեսեասին ջրովի հողի համար 30 րուբլի է, իսկ անջրդի նոյն քանակութեամբ հողի համար՝ 15 րուբլի: Այդ փոխառութիւնը պէտք է ամենաշատն իւրաքանչիւր ծխի համար 350 րուբլի լինի: Գիւղացիք այս պարտքը պետութեանը պէտք է վճարեն իւր ասկոսներով մասւմաս 49 տարուայ ընթացքում:

Եւ այց պետութեան կողմից արուած այս օժանդակութիւնը փոխառութեան ձևով շատ քիչ էր հողաբաժինները գնելու համար: Մինչդեռ Ռուսաստանում պետութիւնը գիւղացիներէ հողաբաժնի գնի 80% է փոխարինարար տալիս, Անդրկովկասում նրա տուածն ընդամէնը հողի գնի 30% է, իսկ մնացած 70%-ը իրենք գիւղացիք պէտք է հոգան: Այս պատճառով էլ գիւղացիք հնարաւորութիւն չունեն իրենց հողաբաժինները գնել և եթէ գնում էլ են, այդ լինում է առանց պետութեան փոխառութեան: Նրանք մեծ մասամբ խոյս են տալիս պետութեան այդ չնչին օգնութիւնից, գանելով այդ ոչ ձեռնառու, կապուած աւելորդ ծախսերի, ձեւականութիւնների հետ: Այնպէս որ այս կէտում էլ բարենորոգութիւնը գիւղացիներին դատապարտել էր երկարատե կախման նախկին ճորատէրերից:

Հետաքրքիր է թէ մինչև այժմ ինչքան գիւղացիք են հողաբաժինները գնել և ինչքան է պարտաւորեալ գիւղացիներէ թիւը: Մինչև 1909 թ. Թիֆլիզի և Քուիթայիսի նահանգներում իրենց հողաբաժինները գնել են 211457 գիւղացիք (արական սեռի կամ 51691 ծուխ), իսկ ժամանակաւոր պարտաւորեալ գրութեան մէջ են 146453 գիւղացիք (արական սեռի կամ 5169 ծուխ): Գնուած են այսքան ժամանակամիջոցում հողաբաժիններից 160457 դեսեասին և մնում են դեռ գնելու 102329 դեսեասին: Պէտք է այս ևս նկատել, որ գնուած հողաբաժինների մեծ ասկոսն ընկնում է Քուիթայիսի նահանգի վրայ, այն էլ ձեռք են բերուած առանց պետութեան աջակցութեան: Պետութեան աջակցութեան գիմել են Թիֆլիզի նահանգի նախկին ճորտերը, որոնք դեռ շատ չնչին հող են գնել<sup>1)</sup>:

1) Б. Гродецкий. Правовыя и поземельныя отношенія землевладѣльцевъ и крестьянъ въ Закавказьѣ (Журналь «На Кавказѣ» 1909 г. № 1 стр. 53—54).

Եւ այսպէս ուրեմն 1864—1865 թ. բարենորոգութիւնը հնարաւորութիւն չէր տուել գիւղացիներին ամբողջապէս ազատուելու ճորտահան դրութիւնից: Նոր օրէնքը դալիս է վերացնելու այդ «ժամանակաւոր պարտաւորեալ» դրութիւնը:

Գիւղացիական երկրորդ բարենորոգութիւնը (1870—1877) վերաբերում է նախկին մուսուլմանական երկրների բէկական, մելիքական և այլ մասնաւոր անձանց հողերի վրայ ապրող գիւղացիներին, գլխաւորապէս հայ և թուրք: Այս բարենորոգութիւնը նորից հաստատում է խաներին, բէկերին, աղաւարներին, մելիքներին բոլոր այն հալուածական իրաւունքները, որ տուել էր Նիկոլայ I-ը իւր 1846 թ. բեսկրիպով: Այսպէս բարենորոգութիւնը հաստատում է այն սխալը, որը գործել էր ռուս հաւաքարութիւնը մուսուլմանական բարձր դասի վերաբերմամբ՝ ճանաչելով նրանց հալուածատէր, մինչդեռ ապացուցուած էր, որ նրանք հալուածական իրաւունքներ չունէին, պետական պաշտօնեաներ էին և իրենց ծառայութեան որպէս վարձատրութիւն ստանում էին որոշ գիւղերի եկամուտներ, այդ գիւղերի վրայ նրանք սեփականութեան իրաւունք չունէին, հողը պատկանում էր պետութեան: Կառավարութիւնն այս դիտարեալ թէ անգիտակից սխալը գործելով նախ պետութեան է մնասում, զրկելով նրան շատ հողերից, որ օրէնքով նրան էր պատկանում, և երկրորդ՝ գիւղացիների դրութիւնն է վատացնում, ձգելով նրանց որոշ հախման մէջ գէպի մուսուլմանական բարձր դասը:

Այս բարենորոգութիւնը բաղկացած է երկու պոլոժեմներէից: Առաջինը (1870 թ.) վերաբերում է խաների, աղաւարների, մելիքների հողերի վերայ ապրող գիւղացիներին, իսկ երկրորդը (1887 թ.) այն գիւղացիներին, որոնք ապրում են մասնաւոր անձանց (աղնուական դասի չպատկանող) հողերի վրայ: Առաջին պոլոժեմիէով գիւղացիք անատեղերի համար երեանի նահանգում ոչինչ չեն վճարում, իսկ Բագուի, Գանձակի և Թիֆլիզի (որոշ գաւառներում) նահանգներում վճարում են գեսեաաինին տարեկան 15-30 կոպէկ: Բոլոր երկրագործական բերքերից վճարում են երեանի նահանգում բերքի 4|50-ը, իսկ միւս նահանգներում բերքի 1|10-ը: Արօտատեղերից օգտուում են ըստ տեղային սովորութեան: Եղած անձնական ծառայութիւնների փոխարէն գիւղացիք հողատէրերին պէտք է վճարեն իւրաքանչիւր գեսեաաին հողին 30 կոպէկ: Եւրաքանչիւր արական շնչին 15 տարեկանից վեր տրւում է 5

դեսեաաին հող: Գիւղացիք կարող են գնել իրենց հողաբա-  
 ժինն առանց հողաաիրոջ համաձայնութեան: Բայց տէրու-  
 թիւնը հողերը գնելու համար սրանց ոչ մի օժանդակութիւն,  
 փոխառութիւն չի տալիս:

Նրկրորդ պոլոժենիէն (1878 թ.), որ վերաբերում է ոչ  
 ագնուականներէ հողերի վերայ ապրող գիւղացիներին, ընդ-  
 հանուր գծերով նման է առաջինին, միայն այստեղ գիւղա-  
 ցիութեան շահերը համեմատօրէն աւելի են ինկատի առ-  
 նուած: Այսպէս իւրաքանչիւր արական շնչին առանց հասակի  
 խտրութեան յատկացրուած է 5 դեսեաաին հողաբաժին, որի  
 մէջ շէն մանում անատեղերը, ջրաղացներն, այլ շինութիւն-  
 ները և այդիները, որոնք համարուում են գիւղացիների կատա-  
 րեալ սեփականութիւն: Գիւղացիներն իրաւունք ունեն գնե-  
 լու իրենց հողաբաժինները, բայց դարձեալ առանց պետու-  
 թեան փոխառութեան:

Վերջին երկու պոլոժենիէները՝ համեմատած կալուածա-  
 տիրական գիւղացիներին վերաբերեալ բարենորոգութեան  
 հետ, տուրքերի, պարտաւորութիւնների և հողաբաժինների  
 շահի կողմից որոշ առաւելութիւններ ունեն: Բայց մինչդեռ  
 պետութիւնը նախկին ճորտերին հողաբաժինները գնելու հա-  
 մար որոշ փոխառութիւն է տալիս, բէկական և մանաւոր  
 հողերի վերայ ապրող գիւղացիներին այդ բանի մէջ ոչ մի ա-  
 ջակցութիւն ցոյց չի տալիս: Այդ պատճառով էլ մինչև օրս  
 այս գիւղացիներից ոչ ոք չի գնել իւր հողաբաժինը, և նախ-  
 կին դրութիւնը շարունակուում է: Նոր օրէնքը վերացնում է  
 և այս կախման դրութիւնը, դարձնելով գիւղացիներին հողի  
 սեփականատէր:

II

Գիւղացիական բարենորոգութեան այս պահատաւոր  
 կողմերը բաւական վնասում էին գիւղացիութեան: Ազգա-  
 ընակութեան մեծամասնութիւն կազմող այս տարրը համա-  
 բեա թէ փաստօրէն գանւում էր նախկին ճորտական կախման  
 վիճակի մէջ: Հողաբաժնի մանրութիւնը, ծանրացող հարկերը,  
 տուրքերը հնարաւորութիւն չէին տալիս գիւղացիութեան  
 կազդուրուել, ստքի կանգնել: Շատ ծանր էր մանաւանդ վրացի  
 գիւղացիութեան դրութիւնը. նրանց մէջ տիրում էր ծայրա-  
 յեղ ջքաւորութիւնը, անապահովութիւն, երկիրը դատարկ-  
 ւում էր բնակիչներից: Իսկ կալուածատէրերն ընդհակառակը  
 ձգտում էին տարէցտարի աւելացնել գիւղացիների տուրքերը:

Բնական է որ այս դրութիւնը գիւղացիներէ մէջ պէտք է ծնեցնէր գոգոսութեան սաղմեր ընդդէմ կալուածատէրերի, հողատէրերի: Յեղափոխական շարժումը վրայ հասնելով գիւղացիութեան մէջ պարարտ հող է գանում, և երկրի այս ու այն հողմերում բռնկում են գիւղացիական շարժումներ ընդդէմ հողատէրերի:

Գիւղացիութեան դրութիւնն այնքան ծանր էր, որ նա պարարտ էր ամենայն ծայրայեղութեան դիմելու: Այս շատ լաւ նկատում, դիւր է այն ժամանակուայ Աովհասի գլխաւոր կառավարչապետը՝ Եշխան Գուլիցիներ: Եւ այս խիստ, դաժան անձնաւորութիւնը ձեռնարկում է գիւղացիների վիճակի թեթեւացման: Այս արդէն ցոյց է տալիս, թէ որքան սպառնալից էր դարձել գիւղացիութեան գոգոսութիւնը: Գեոգրանից առաջ 1872-73 թ. Աովհասի վարչութիւնը ձեռնարկել էր ճորտական մնացորդների վերացման, բայց հազիւ 12 տարուայ ընթացքում այդ բիւրոկրատիական աշխատանքը վերջանում է և 1885 թ. ներկայացնուում է ներքին գործոց նախարարութեան պետական խորհուրդը մտցնելու համար: Բայց խորհուրդը չի հաւանում այդ և 1897 թ. յետ է ուղարկում: Հասարակութիւնը տեսնելով կառավարութեան այս գանդաղիտութիւնը, իւր կողմից սկսում է պահանջել: Թէ յեղափոխական ընկերութիւնները և թէ հասարակական մի շարք հաստատութիւններ ըննադատում են անբող դրութիւնը և պահանջում վերացնել ճորտատիրական մնացորդները: Պահանջում են 1881 թ. օրէնքի կէտերը ապրածել և Աովհասում, նոյն հիմքերով, ինչպէս Աուսաստանում էր: Այդ օրէնքը պարտաւորեցնում էր գնել հողաբաժինները: Աերջապէս Աովհասի կենդրոնական կառավարութիւնը խորհրդակցութեան նիւթ է դարձնում գիւղացիների դրութիւնը: Այդ խորհրդակցութեան մասնակցում են գանազան պաշտօնեաներ և հրաւիրուած անձինք, իսկ գիւղացիութիւնը ներկայացուցիչներ չունէր: Մշակուում է մի նախագիծ, որը հետեւալ գլխաւոր կէտերն էր պարունակում:

1. Այս նախագիծը վերաբերում է նախկին ճորտերին և մուսուլմանական բարձր դասին ու մասնաւոր անձանց հողերի վրայ ապրող գիւղացիներին:

2. Երկու տարուայ ընթացքում այս գիւղացիք կառավարութեան աջակցութեամբ պարտաւոր են գնել իրենց հողաբաժինները:

3. Հողատէրերը վարձատրուում են հետեւեալ կերպ. վարե-

լահողերի համար վճարուում է Քիֆլիզի և Քուլթայիսի նահանգներում, բացառութեամբ լեռնային մասերի, ամենալաւ տեսակի հողի գետեաափինն ոչ աւել 80 բուրլի, ցածր տեսակի համար ոչ ցածր 26 ոււր. 66 հոսպ. : Բորչալուի, Ախլցխայի և Սխալքալաքի գաւառներում և Բաղուի ու Գանձակի նահանգներում վարելահողի գետեաափինն արժէ լաւ տեսակը ոչ աւել 45 բուրլուց, իսկ ստոր տեսակը ոչ պակաս 6 բուրլուց : Երեւանի նահանգում վարելահողի լաւ տեսակի գետեաափինն արժէ 60 բուրլուց ոչ աւել, իսկ ստոր տեսակը 8 բուրլուց ոչ պակաս :

4. Տնատեղերը հալուածաաիրահան հողերում պէտք է գնեն իրենք գիւղացիք ըստ այն գնի, որ նշանակուած է աւաւանայեա գրամոտայում համ տարեկան տուրքը 6% հապիտալիգացիայի ենթարկելով : Կսկ միւս տեղերում տնատեղերը գիւղացիք սեփականացնում են առանց վճարելու հողաաիրոջ, եթէ գնել են վարելահողերը :

5. Այգիների համար Քիֆլիզի և Քուլթայիսի նահանգներում վճարում են գետեաափինն ոչ աւել 200 բուրլուց, Երեւանի նահանգում 88 բուր. 63 հոսպ. իսկ միւս տեղերը 66 բուր. 66 հոսպ. (բէկահան, աղալարահան հողերի վերայ) : Մասնաւոր անձանց հողերի վերայ գանւող այգիները դառնում են գիւղացիների սեփականութիւն առանց վարձաարելու հողաաիրոջը, եթէ գիւղացիք գնել են իրենց միւս հողաբաժինները :

6. Գիւղացիք պէտք է պետութեան վճարեն տուած փոխառութեան համար տարեկան 5%, մինչև պարտքը հատուցանելը :

7. Փոխառութիւնը պէտք է հանդցնուի տարեկան վճարումներով 41 տարուայ ընթացքում :

Եթէ այս ծրագիրն իրագործուէր, հողատէրերը պէտք է ստանային 27200000 բուրլի վարձաարութիւն, որը շատ շատ էր և անարգարացի :

Բայց Գուլիցինի նախագիծը չի իրականանում իրար յաջորդող յեղափոխական գէպերի պատճառով : Նրան յաջորդէց հոմո Աօրօնցով Գաշիովը : Գտնում է գիւղացիներին վիճակը բաւական թշուառ և իւր հոգմից 1905 թ. վերջին մի նոր նախագիծ է ներկայացնում մինիստրներին խորհրդին :

Այս նախագիծը խիստ տարբերում է առաջինից : Բացի առաջնի մէջ թուած գիւղացիներից, այս ծրագրուելիք օրէնքը տարածում է Զարաթալի շրջանի, Գաղստանի օրլաստի և Էջմիածնապաաական գիւղացիներին վրայ : Նոյնպէս առաջարկ-

ւում է պետական դիւղացիներէ վճարելիք հողային (բահրա) հարկը վերացնել և հողաբաժինները դարձնել նրանց սեփականութիւնը: Փոխարքան մտադրուած էր վերացնել և խիզանային դրութիւնը:

Ըստ այս նախագծի պէտք է անմիջապէս վերացնել նախարարենորոգչական բոլոր մնացորդները, դիւղացիներին դարձնել իրենց հողաբաժնի սեփականատէր: Դիւղացիք հողատէրերին դրա համար ոչինչ չպէտք է վճարէին: Տէրութիւնն ինքը պէտք է վճարէր հողատէրերին, բայց ոչ այնքան շատ, ինչպէս Գուլիցինն է առաջարկում, այլ պահսեցրած: Այսպէս Թիֆլիզի, Քուլթայիսի և Նրեանի նահանգներում ամենաշատը մի դեսեատին հողին պէտք է վճարել 60 բուբլի, իսկ միւս նահանգներում (Բազուի, Գանձաիի և Թիֆլիզի մուսուլմանական նախկին դիստանցեաներում) դեսեատինին 45 բուբլի: Նոյն գնով պէտք է գնուեն և այգիները: Առաջարկուած են նոյնպէս մի շարք միջոցներ դիւղացիներէ դրութիւնը բարձրացնելու համար:

Այս նախագիծը մինիստրներէ խորհրդում զբաղմունքի նիւթ է դառնում 1906 թ. սկզբներին: Փոխարքայի առաջարկութիւններին միանում են մի քանի բացառութիւններով թէ հողադործութեան մինիստրը (Վուալեր) և թէ Ֆինանսներինը (Շիպով): Բայց որոշուած է այդ օրէնքը Գուլմայով անցկացնել և ոչ անմիջապէս, ինչպէս փոխարքան էր առաջարկում: Նսկ յեղափոխութեան բռնկման պատճառով այդ օրէնագիծը յետ է դարձնւում փոխարքային, որ նորից վերամշակուի:

Տեսնելով անհամբեր սպասուող օրէնքի այսպիսի յապաղումը և դուշահեղով նրա փոփոխումը, Պետական Գուլմայի 34 անդամներն իրենց կողմից Գուլմային առաջարկում են ընդունել հետևեալ նախագիծ օրէնքը:

1. Պարաւաւորեալ և կախման բոլոր տեսակի յարաբերութիւնները վերացնել անմիջապէս առանց հողատէրերին վարձատրելու:

2. Բոլոր տեսակի տուրքերը, որ վճարում են հողատէրերին, պէտք է վերացնել և դիւղացիք դառնում են սեփականատէր իրենց յատկացուած բոլոր տեսակի հողաբաժինների (անատեղ, այգի, վարելահող և այլն):

3. Արտատեղիներէրից, անտառից և ջրից օգտուելու իրաւունքը պէտք է տրուի դիւղացիներին և կարգաւորուի այնպէս, ինչպէս այդ արուած է կայսրութեան հիւսիսարեւմտեան նահանգներում:

Այս նոր առաջարկը դրդում է փոխարքային շտապեցնել իրեն յանձնուած նախագծի վերամշակումը, որը 1911 թ. պարտատ ներկայացնում է մինխտարների խորհրդին: Այս վերամշակուած նախագիծը միանդամայն հակապատկերն է փոխարքայի 1905 թ. կազմածի և աւելի մօտենում է Գուլիցինի նախագծին: Այսակը մտցրում են մի քանի խոշոր փոփոխութիւններ: Այսպէս հողաբաժինները պէտք է տէրութիւնը գնէ գիւղացիների հաշուին, իսկ վերջիններս մաս-մաս պէտք է վճարեն այդ պետութեան: Նախագծից հանած են Չաքաթալի շրջանին և Գերբենդի օբլաստի պարտաւորեալ գիւղացիների մասին եղածը: Հանուած է նոյնպէս պետական գիւղացիների վճարելիք հողային հարկի վերացման առաջարկը: Հողաբաժինների արժէքը բաւական բարձրացած է միայն հողի գները նշանակուած են ըստ գաւառների իրարեց բաւական տարրեր:

Այս նախագծով 1911 թ. յունուարի մէկից աղատուում են ժամանակաւոր պարտաւորեալ, ինչպէս և մուսուլմանական բարձր դասի հողերի վերայ ապրող, նոյնպէս և մասնաւոր (ոչ աղնուականների) անձանց հողերում գտնուող գիւղացիք իրենց բոլոր պարտաւորութիւններից դէպի հողատէրերը դառնում են իրենց հողաբաժինների սեփականատէր: Այս օրէնքը տարածուած է և էջմիածնի վանքապատական հինգ գիւղերի բնակիչներին վրայ: Հողատէրերին վճարում է պետութիւնը, յետոյ գիւղացիներից այդ ստանալու իրաւունքով: Գիւղացիք տարեկան մի որոշ գումար պէտք է վճարեն պետութեան իւր տոկոսներով: Այս պարտքը հանդցնելու երեք ժամանակամիջոց է որոշուած. 56 տարի, 41 տարի և 28 տարի: 56 տարուայ բնթացքում վճարելու դէպքում տոկոսն է 4<sup>1</sup>/<sub>2</sub>, 41 տարում՝ 5<sup>0</sup>/<sub>10</sub>, իսկ 28 տարում՝ 6<sup>0</sup>/<sub>10</sub>:

Այսպէս վերելից արուած հրահանգի համաձայն բաւական այլանդակուում է փոխարքայի կազմած առաջին նախագիծը, որը համեմատորէն յօգուտ գիւղացիների էր: Պետական Գումային էր մ'նում կամ նոյնութեամբ ընդունել այս երրորդ նախագիծը, կամ թէ փոփոխել յօգուտ գիւղացիների:

### III

Անցեալ տարի Պետական Գումայն զբաղուում է փոխարքայի 1911 թ. մինխտարների խորհրդին ներկայացրած և վերջն իրեն յանձնած նախագծի բնութեամբ, որը շատ չնչին փո-

փոխութիւններով ընդունուած է, դեկտեմբերի 20-ին կայսրից հաստատուած է: Նոյն ամսի 26-ին յայտարարուած է նոր օրէնքը:

Այսպէս նոր օրէնքով 1913 թ. յունուարի 1-ից Թիֆլիզի և Քուիսթալիսի նահանգների ժամանակաւոր պարտաւորեալ գիւղացիների, ինչպէս և Նրեանի, Վանձակի, Քաղուի, Թիֆլիզի մուսուլմանական բարձր դասին պատկանողների և մասնաւոր անձանց հողերի վրայ ապրող գիւղացիների գէպի հողատէրերն ունեցած բնական և փողային պարտաւորութիւնները գնւում են, իսկ գիւղացիք այդ նոյն օրուանից (յուն. 1. 1913 թ.) դառնում են իրենց հողաբաժինների տէր, սեփականատէր գիւղացիներին հաւասար իրաւունքներով: Այս օրէնքը տարածւում է և ուղղափառ յունագաւան-արեւելեան և հայ լուսաւորչական եկեղեցապատկան գիւղացիների վրայ:

Պարտաւորութիւնների գնման վճարն որոշուած է հետևեալ կերպ: Եթէ գիւղացիների պարտաւորութիւնների հողաբաժնի կամ զանազան տեսակի հողերի համար որոշուած է փողի բահրայով ուստաւնայեա գրամոտաները կազմելու ժամանակ, այդ գէպքում տարեկան բահրան պէտք է 6<sup>0</sup>/<sub>10</sub> կապիտալիզացիայի ենթարկել, այսինքն բաղմապատկել 16<sup>2</sup>/<sub>5</sub>-ով, և այդ կլինի գնման վճարը: Իսկ եթէ ուստաւնայեա գրամոտաներում գիւղացիների պարտաւորութիւններն որոշուած են բնական բերքով, եթէ յետագայում նոյն իսկ փողի վերածած էլ լինին, նրանց հողերի գնման վճարը որոշուած է հողի իւրաքանչիւր տեսակի դեսեատինն առանձին, որի ցուցակը կցուած է օրէնքին:

Առանց հողատէրերին վճարելու, գիւղացիներին են անցնում սեփականութեան իրաւունքով այն հողերը, որոնց համար օրէնքով ոչ մի պարտաւորութիւն չի նշանակուած, այսինքն՝ 1) անատեղերը ա. ոչ մուսուլմանական դասին պատկանող անձանց կալուածքներում, բ. Նրեանի նահանգի և Ղուբայի գաւառի (Քաղուի նահանգ) բէկական կալուածքներում, գ. Քաղուի, Վանձակի և Թիֆլիզի նահանգների խանական, բէկական, աղալարական և մելիքական կալուածքներում, այն գէպքում, երբ անատեղերն անյարմար հողի վրայ են գտնւում և ենթակայ չեն դեսեատինի հաշւով տուրքի յօդուած հողատէրերի: 2) բոլոր այգիներն, որոնք գտնւում են բնակատեղուն կից մուսուլմանական բարձր դասին չպատկանող մասնաւոր անձանց կալուածքներում: 3) նոյն կալուածքներում գտնւող այն այգիները, որոնք ձգուած են դաշ-

տերին հից մինչև 1879 թ. հոկտեմբերի 18-ը. 4) Գարլարի կոչուած խաղողի այգիների կէտը և Մազլարի կոչուած այգիների մի երրորդը ճորտահան գրութիւնից ազատուած այն գիւղացիներին, որոնց նախկին տէրերը չեն պատահանում ժառանգական ազնուականութեան (Քուլթայիսի նահանգում): Նոյսպէս անվճար գիւղացիներին է անցնում գիւղական հողերի արանքում ընկնող վարելու անպէտք, խոտատեղու համար անյարմար հողերը, քարքարոտ, հաւային և նման տարածութիւնները, որոնցից հողատէրը չէ օգտուում և որոնց մասին ուստաւնայեա գրամոտներում ոչինչ չի յիշուած: Իսկ արօտատեղիներից, սառգելու ջրերից, անտառներից օգտուելու իրաւունքները մնում են նոյնը մինչև առանձին օրէնքներ հրատարակելն այդ մասին: Միայն Քիֆլիդի և Քուլթայիսի նահանգներում, բացառութեամբ լեւնային մասերի, գիւղացիք այլևս իրաւունք չունեն օգտուելու կալուածատիրական անտառներից:

Գիւղացիներին սեփականութիւն դառնող հողերի համար կալուածատէրերին վճարում է պետական գանձարանը գնման գործողութիւնները վերջանալուց յետոյ: Իսկ մինչև այդ նրանք կարող են գանձարանից որոշ տոկոսներ ստանալ:

Պետական գանձարանի կալուածատէրերին վճարած գումարները գիւղացիք պէտք է վճարեն գանձարանին մաս-մաս իւր տոկոսներով: Ամեն տարի պէտք է վճարեն մի որոշ գումար և տոկոսը: Պարտքը հագցնելու երեք ժամանակամիջոց է որոշուած. 56 տարի, 41 տարի և 28 տարի: Ընտրութիւնը թողնւում է գիւղերին և ոչ թէ առանձին անհատների. որոշումը լինում է ձայների հասարակ մեծամասնութեամբ: Ամեն ժամանակամիջոց ունի իւր տոկոսը. 56 տարուայ ժամանակամիջոցն ընտրելու դէպքում պէտք է վճարել  $4\frac{1}{2}\%$ , 41 տարում  $5\%$ , իսկ 28 տարում  $6\%$ :

Այս գիւղացիները յունուարի 1-ից 1913 թ. պէտք է վճարեն պետական հողային հարկ և ղեմակի տուրք նոյն հիմունքներով, ինչպէս սեփականատէր գիւղացիներն Անգրիոփիասում:

Մինչև առանձին կարգադրութիւն, արդելւում է մի գաւառի սահմանում կենդրոնացնել մի ձեռքում գնման կամ նստէրի միջոցով գիւղացիական հողաբաժիններ:

Այս է նոր օրէնքը ընդհանուր դժերով: Ղերջին կցուած է մի յաւելուած, ուր ըստ գաւառների, հողերի տեսակի որոշուած է հողի գետեատինի արժէքը <sup>1)</sup>:

1) Законъ о прекращеніи временно-обязательныхъ и зависимыхъ отношеній крестьянъ и поселянъ къ помѣщикамъ и землевладѣль-

Տեւնեւնք այժմ ինչ առաւելութիւններ ու թերութիւններ ունի այս նոր օրէնքը, ինչ է բերում նա Անդրկովկասի գիւղացիութեան համար:

Նոր օրէնքը՝ համեմատած նախկին գրութեան հետ, գիւղացիներին ազատում է ճորտական, կախման գրութիւնից, որին դատապարտուած էին գիւղացիական բարենորոգութիւնից ի վերե նրանից առաջ: Գիւղացիք թեթեանում են տուրքերից, նրանց հնարաւորութիւն է արւում կազմուրուելու, ստքի կանդնելու: Վերջ է արւում կալուածատէրերի կամայականութիւններին, մի պատճառ, որ ծանր կերպով մնասում էր գիւղացիներին տնտեսութեան: Եթէ այս օրէնքն աւելի ուշանար, գիւղացիներին գրութիւնն, անշուշտ, պէտք է էլ բարդանար, թշուառութիւնն, անապահովութիւնը մեծ չափերի հասնէր: Նոր օրէնքը՝ գիւղացիներին վիճակը մասամբ թեթեացնելով, դրանով նպաստած է լինում և Աովկասի բովանդակ տնտեսական—կուլտուրական կեանքին: Գիւղացիներին այդ պարտաւորեալ, կախման գրութիւնը խիստ կերպով անդրադառնում էր Անդրկովկասի բովանդակ կեանքի վրայ, խանդարում երկրի յառաջադիմութեան, մանաւանդ եթէ ինկատի առնենք, որ ազգաբնակչութեան ՏՅ տոկոսը կազմում են գիւղացիներն: Այժմ մասամբ վերացած են մի շարք դժուարութիւններ, և կեղեքուած գիւղացիութիւնը կարող է մի քիչ ազատ շունչ քաշել:

Բայց օրանով նոր օրէնքը չի կարող կատարեալ համահարութիւն գտնել, առանց քննադատութեան մնալ: Նոր օրէնքն ունի խոշոր սխալատեթիւններ, գործել է որոշ անարդարութիւն, որոնք պէտք է երեան հանուեն:

Նախ այս օրէնքը չի հանդիսանում որպէս արդիւնք մի առանձին ողորմածութեան գէպի Աովկասի այդ թշուառ գիւղացիութիւնը: Գեռ 1881 թ. գեղատեմբերի 28-ի օրէնքով ռուս ճորտ գիւղացիներին չղնուած հողաբաժինները պետութիւնը գնել էր գիւղացիներին հաշուին, իսկ 1905 թ. մանիֆեստով պետութիւնը գիւղացիներին ներել էր իրեն հողաբաժիններին շվճարած արժէքի մնացորդը: Այնպէս որ ինչ որ նոր օրէնքով, այն էլ 1881 թ. գեղ. 28-ի օրէնքի մաքով, արւում է Անդրկովկասի գիւղացիներին, ռուս գիւղացիք վաղուց ունէին, մինչև

самъ въ Тифлисской, Кутаисской, Эриванской, Бакинской и Елисаветпольской губерніяхъ. Изданіе канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Тифлисъ 1913 г.

անդամ աւելի լայն չափով: Այսքան դանդաղումից յետոյ անդամ Անդրհովհասի գիւղացիներն վերայ չի տարածւում 1908 թ. մանիֆեստի որոշ կէտերը:

Երկրորդ՝ նոր օրէնքը բուրժուական վերջ չի դնում ճորտատիրական մնացորդներին: Նա չի տարածւում Զաքարթալի շրջանի, Գերբենդի օբլաստի որոշ կարգի գիւղացիներն և խիզաններն վրայ: Սրանք դարձեալ դատապարտուած են կիսատարրկացած դրութեան:

Երրորդ՝ նոր օրէնքը չպէտք է հողատէրերին մի աւելորդ անդամ էլ վարձատրէր, ինչպէս այդ պնդում էին պետական դումայի 34 անդամներն իրենց առաջարկի մէջ: Հողատէրերն արդէն այսքան երկար ժամանակուայ քննարկում (48 տարի) արդէն լիովին վարձատրուել են գիւղացիներից վճարած տուրքերով, և անարդարացի էր նրանց նորից վարձատրել: Մի փոքրիկ հաշիւ այս աւելի կպարզէ: Ըստ օրէնքի նախկին ճորտ գիւղացիք պէտք է իւրաքանչիւր դեսեատին հողին վճարէին տարեկան արդիւնքի 6% կապիտալիզացեան (ըստ փոխարքայի գիււանատան հաշիւների 9 ըուբլի դեսեատինին) բազմապատկած 16<sup>2</sup>/<sub>5</sub>ով, այսինքն դեսեատինին 150 ըուբլի: Բայց որովհետեւ գնումը խիզոյն տեղի չի ունեցել անկախ գիւղացիների ցանկութիւնից, շնորհիւ կառավարութեան և կալուածատէրերի բռնած դերքի, գիւղացիք ստիպուած են եղել տարեկան 9 ըուբլի դեսեատինին վճարել, որը 48 տարուայ մէջ անում է 460 ըբլ: Ուրեմն փոխանակ օրէնքով որոշած 150 ըուբլու, գիւղացիք կալուածատէրերին վճարել են մի դեսեատին հողին 460 ըուբ. դեռ չհաշուած այն, որ իւրաքանչիւր ազատուած ճորտի համար նրանք ստացել են 25-50 ըուբլի: Այսպէս կալուածատէրերը ստացել են իրենց հողի եռակի արժէքը, մինչդեռ ուստական կալուածատէրերը ստացել են մի դեսեատինին միայն 27 ըուբլի: Այսքան առատ վարձատրութիւնից յետոյ արդեօք անարդարացի չէ նրանց կրկին վարձատրելը <sup>1)</sup> Ինչ վերաբերում է մուսուլմանական բարձր դասին պատկանող հողատէրերին վարձատրելու խնդրին, նրանք անխրաւացի կերպով տիրացած լինելով պետական հողերին, պէտք է նրանց մինչև այժմ գիւղացիներից ստացածը շատ ու շատ համարէին, դրանով բաւականանային և ոչ թէ նորից առատ վարձատրէին:

Եթէ պետութիւնը իւր կողմից զանազան նկատումներով անհրաժեշտ, նպատակայարմար էր գտնում այդ հողատէրերին

1) Орестъ Семинъ. Годовщина. кр. 139—140.

վարձատրեւն, այն ժամանակ թող վարուէք համաձայն փոխար-  
քայի առաջին նախագծի առաջարկին, այսինքն այդ վարձա-  
տրութիւնն իւր վրայ առնէք, առանց գիւղացիներին ծանրա-  
բեռնելու: Նոր օրէնքով գիւղացիները պէտք է վճարեն բաւա-  
կան բարձր գին իրենց հողաբաժինների համար, որ միանգա-  
մայն անարդարացի է և ծանրացնում է գիւղացիների վիճակը,  
նրանց դարձեալ դժուարութիւնների մէջ է ձգում:

Արտաքուստ թւում է թէ հողերի գները բաւական ցածր  
են նշանակուած: Այո՛, եթէ համեմատենք ներհայտմա Անդր-  
հովիտում տիրող գների հետ, բաւական ցածր են: Ներհա-  
յտմա հողի գեսեաաիննն արժէ մի քանի հարիւր ռուբլի, իսկ  
որոշ մասերում նոյնիսկ 800 ռուբլի (Երևանի և Քուժատիսի  
նահանգներում), մինչդեռ նոր օրէնքով գեսեաաինին ամենա-  
շատը նշանակուած է 150 ռուբլի: Բայց չպէտք է կարծել որ  
նրանով գիւղացիներին մեծ բարիք է արուել: Բարիքն այն ժա-  
մանակ կլինէր, եթէ նրանց առանց նորից ծանրաբեռնելու,  
անվճար տային հողաբաժինները և ոչ թէ 1861 թ. օրէնքով որոշ-  
ուած գնից էլ բարձրացնէին:

Նոր օրէնքով համեմատօրէն բարձր գներ են նշանակուած  
վրացի կալուածատէրերի հողերի համար, իսկ ցածր գներ են  
նշանակուած մասնաւոր անձանց հողերի համար, դրանց միջին  
տեղը բռնում են մուսուլմանական բարձր դասին պատկանող-  
ների հողերի գները: Հողերի գները որոշուած են ըստ հողերի  
տեսակների (տնատեղ, այգի, ջրովի և անջրդի վարելահող,  
ջրովի և անջրդի խոտատեղի): Ամեն դաւառի համար նշանա-  
կուած են առանձին գներ: Վրացի կալուածատէրերի հողերը  
գնահատուած են հետեւեալ կերպ: Տնատեղերի արժէքն որոշ-  
ւում է տարեկան բահքայի 6% կապիտալիզացիայով: Այգիներ-  
ից նրանք, որոնք մացրուած են ուստաւնայեա դրամոտաների  
մէջ, նրանց գեսեաաիննն արժէ ամենաշատը 156 ռուբլի, ամենա-  
քիչը 94 ռուբլի: Իսկ այն այգիները, որոնք ձգուել են ուս-  
տաւնայեա դրամոտաները կազմելուց յետոյ, նրանց գեսեա-  
աիննն արժէ ամենաշատը 78 ռուբլի, ամենաքիչը 47 ռուբլի: Ջրովի  
վարելահողի գեսեաաիննն արժէ ամենաշատը 73 ռուբլի, ամե-  
նաքիչը 47 ռուբլի: Անջրդի վարելահողի գեսեաաիննն արժէ  
ամենաշատը 44 ռուբլի, իսկ ամենաքիչը 19 ռուբլի: Խոտատեղի  
լաւ տեսակի գեսեաաիննն արժէ ամենաշատը 62 ռուբլի, ամե-  
նաքիչը 16 ռուբլի:

Մուսուլմանական բարձր դասին պատկանողների հո-  
ղերը հետեւեալ կերպ են գնահատուած: Տնատեղի գեսեաաիննը



Նահանգի, գաւառի եւ գնուելիք ճողերի  
 տեսակների անունները

Գնման արժէքը մի  
 գեսեաթինի այն  
 կալուածքներում,  
 որոնք ենթարկուած  
 են 548, 666 օրէնս-  
 կէտերի: Полож. кр-  
 ест. Влад. из. 1902 г.

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳ

Ր Ո Ւ Բ Լ Ի

1. Նախիջեւանի գաւառ

1. Այգիներ, որոնք կան ուստաւնայեա գրամո- տաներում եւ պահուած են մինչև գնումը, նոյն- պէս բանջարանոցներ եւ բոստաններ, որոնք փո- ղային բահրայի տակ են յօդուա կալուածատի- րոջ . . . . .	6% փողային բահրայի կապի- տալիդացեայով	
2. Միւս այգիներ, փոքր անտառներ, բանջա- րանոցներ, բոստաններ	43	
Զբոյլի վարելահողեր } 1 կարգի . . . . .	43	
	2 » . . . . .	39
	3 » . . . . .	38
Անջրգի վար. հողեր } 1 եւ 2 կարգի . . . . .	30	
	3 կարգի . . . . .	28
Զբոյլի խոտատեղեր } 1 եւ 2 կարգի . . . . .	33	
	3 կարգի . . . . .	20
Անջրգի խոտատեղ. } 1 կարգի . . . . .	17	
	2 » . . . . .	13

2. Նոր Բայազէտի գաւառ

1. Այգիներ առաջին տեսակի (տես Նախիջ. գ.)	6% կապիտալիդ.
2. Այգիներ երկր. տեսակի (տես Նախիջ. գ.)	25
Զբոյլի վարելահողեր } 1 գօտու . . . . .	25
	2 » . . . . .
Անջրգի վարելահող. } 1 գօտու . . . . .	23
	2 » . . . . .
Խոտատեղիներ } 1 կարգի . . . . .	17
	2 » . . . . .

Նահանգի. գաւառի եւ գնուելիք հողերի  
 քառակուսի անունները

Գնման արժէքը մի  
 դեսեսատինի այն  
 կալուածքներում,  
 որոնք ենթարկուած  
 են 548, 666 օրէնս-  
 կէտերին: Пол. кре-  
 ст. Влад. из. 1902 г.

Ր Ո Ւ Բ Լ Ի

3. Սարմալուի գաւառ

1. Այգիներ առաջին կարգի (տես Նախըջ. գ.)	6 <sup>0</sup> / <sub>10</sub> կապիտալիզ.	
2. Այգիներ երկրորդ կարգի ( « * » )	45	
Զբոսի վարելահողեր	1 կարգի . . . . .	45
	2 » . . . . .	42
	3 » . . . . .	39
	4 » . . . . .	39
Անջրդի վարելահող.	1 կարգի . . . . .	32
	2 » . . . . .	30
	3 » . . . . .	28
Խոտատեղեր	13	

4. Շարուր-Իարալագեազի գաւառ

1. Այգիներ առաջին կարգի (տես Նախըջ. գ.)	6 <sup>0</sup> / <sub>10</sub> կապիտալիզ.	
2. Այգիներ երկրորդ կարգի ( « » » )	67	
Զբոսի վարելահողեր	1 կարգի . . . . .	67
	2 » . . . . .	54
	3 » . . . . .	48
	4 » . . . . .	40
	5 » . . . . .	56
Անջրդի վարելահող.	1 կարգի . . . . .	29
	2 » . . . . .	27
Խոտատեղեր	Զբոսի	25
	անջրդի	17

Նահանգի, գաւառի եւ գնուելիք հողերի  
 քեսակների անունները

Գնման արժէքը մի  
 դեոեաաիւնի այն կալ-  
 ուածքներում, որոնք  
 ենթարկում են օ-  
 րէնօգրքի 548.666  
 կէտերին: Пол. Крест.  
 Влад. изд. 1902 г.

5. Երեսանի գաւառ

Ր Ո Ի Բ Լ Ի

1. Այգիներ առաջին կարգի (տես Նախիջ. գ.)	60	կապիտալիզ.
2. Այգիներ երկրորդ կարգի ( " " " )	63	
Ջրովի վարելահողեր	տափար. գօտու 1 կարգի	63
	" " 2 "	42
	" " 3 "	38
	Նախալեռ. գօտ. 4 "	36
Ջրովի վարելահողեր լեռնային գօտու 5 կարգի	33	
Անջրդի վարելահող.	Նախալեռ. գօտու . . .	30
	լեռնային գօտու . . .	27
Անջրդի խոտատեղ.	տափար. գօտու 1 կարգի	25
	" " 2 "	20

6. Էջմաժնի գաւառ

1. Այգիներ առաջին կարգի (տես Նախիջ. գ.)	60	կապիտալիզ.
2. Այգիներ երկրորդ կարգի ( " " " )	64	
Ջրովի վարելահողեր	1 կարգի . . . . .	64
	2 " . . . . .	39
	3 " . . . . .	36
	4 " . . . . .	36
	5 " . . . . .	32
Անջրդի վարելահող.	1 կարգի . . . . .	31
	2 " . . . . .	28
	3 " . . . . .	27
Ջրովի խոտատեղեր	1 կարգի . . . . .	27
	2 " . . . . .	20
Անջրդի խոտատեղեր . . . . .	13	

Նկատուելիք: Երեսանի նահանգում բոլոր կալուածքներում տնտեսողերը  
 գիւղացիք ստանում են որպէս սեփականութիւն առանց հողատէրերին վճարելու՝  
 Այնտեղ նոյնպէս այն անձանց կալուածքներում, որոնք բարձր դասին չեն պատկա-  
 նում, գիւղացիներ ստանում են որպէս սեփականութիւն. առանց հողատէրերին  
 վճարելու. 1. բոլոր այգիները, որոնք կից են տնտեսողերին, 2. այգիները, որոնք  
 ձգուած են արտերի սահմաններում մինչև 18 հոկտեմբերի 1879 թ.:

Նահանգի գաւառի եւ գնուելիք հո-  
ղերի տեսակների անունները

Գնման արժէքը մի դեոսեա-  
տինի այն կալուածքներում,  
որոնք ենթարկուած են 548-  
666 կէտերին: Пол. Крест-  
изд. 1902 г.

Բարձր դասին  
պատկանող—  
ների կալուած-  
ներում: Այն անձանց  
կալուածքնե-  
րում, որոնք  
բարձր դասին  
չեն պատկա-  
նում:

ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳ

ԲՈՒԲ. Կ. ԲՈՒԲԼԻ

1. Արէ՛ի գաւառ

Տնատեղեր

1. Այգիներ, որոնք նշանակուած են ուս-  
տաւնայեա գրամտ. եւ պահուել են  
մինչև գն. . . . .

2. Այգիներ եւ փոք անտառ. որոնք ձգւել  
են ուստաւնայեա գրամ. կազմ. յետոյ

Զբոսի վարելահող { I դասու 1 կարգի . . . . . 36  
                                  »     »   2 եւ 3 կարգի . . . . . 34  
                                  III   »   1 կարգի . . . . . 30

Անջրդել վարհողեր { III   »   1 կարգի . . . . . 28  
                                  II     »     »     »     . . . . . 23  
                                  II եւ III դաս. 2 կար. . . . . 21

Զբոսի խոտատեղ. { II դասու . . . . . 18  
                                  I     »     . . . . . 16

Անջրդել խոտատեղ. { III դասու 1 կարգի . . . . . 16  
                                  II     «   1   »     . . . . . 13  
                                  III   »   2   »     . . . . . 13

2. Կարեագիւնի գաւառ

Տնատեղեր

1 Այգ. առաջին կար. (տես Արէ՛ի գ.) . . . . . 73

2 Այգիներ երկրորդ կարգի)   »   »     . . . . . 39

Զբոսի վարելահողեր { 1 կարգի . . . . . 39  
                                  2   »     . . . . . 29  
                                  3   »     . . . . . 27

Անջրդել վարհողեր { 1 կարգի . . . . . 24  
                                  2   »     . . . . . 22  
                                  3   »     . . . . . 21

Զբոսի խոտատեղեր . . . . . 17

5 — — —

67 — — —

36 — 31

36 31

34 29

30 25

28 23

23 18

21 16

18 13

16 11

16 11

13 } 8

5 — — —

73 — — —

39 — 34

39 34

29 24

27 22

24 19

22 17

21 16

17 12

Նահանգի, գաւառի եւ գնուելիք հողերի տեսակների անունները

Մեծան արժէքը մի դեռեւա-  
տիւնի այն կալուածքներում,  
որոնք ենթարկուած են 548  
666 օրէնսդէտերին: Полож.  
Крест Влад. изд. 1902 г.

Բարձր դասին  
պատկանողնե-  
րի կալուածք-  
ներում: Այն անձանց  
կալուածքնե-  
րում, որոնք  
բարձր դաս-  
ին չեն պատ-  
կանում:

ԲՈՒԲ. Կ. ԲՈՒԲ.

3. Գանձակի գաւառ

Տնատեղեր		5	—	—	
1. Այգ. առաջին կարգի (տես Արէշի գ.)		57	—	—	
2. Այգ. երկրորդ կարգի ( » » )		31	—	26	
Զբոսիկ հողեր	{ տափար. գօտ. 1 կար.	31		26	
		» » 2 »	27		22
		» » 3 »	26		21
Անջրդի վարելա- հողեր	{ նախալեռն. գօտու.	26		21	
		նախալեռն. գօտու.	24		19
Զբոսիկ խոտատեղեր	{ լեռնային գօտու.	21		17	
		տափարկային գօտու.	22		12
		նախալեռն. գօտու.	17		9
Անջրդի խոտատե.	{ նախալեռն. գօտու.	14		7	
		լեռնային գօտու.	12		

4. Զուանեփի գաւառ

Տնատեղեր		5	—	—	
1. Այգ. առաջին կարգի (տես Արէշի գ.)		51	—	—	
2. Այգ. երկրորդ կարգի ( » » )		28	—	23	
Զբոսիկ վարելահողեր	{ տափար. գօտ. 1 կար.	28		23	
		» » 2 »	27		22
Անջրդի վարելա- հողեր	{ նախալեռն. գ. 1 կար.	24		19	
		» » 2 »	22		17
		լեռնային գ. 1 կար.	20		15
Խոտատեղեր	{ ջրովի	19		14	
		անջրդի	14		9

Նահանգի, գաւառի եւ գնուելիք  
նողերի տեսակների անունները

Յնման արժէքը մի գետնա-  
տինի այն կալուածքներում  
որոնք ենթարկուած են 548-  
666 օրէնսկետերին: Пол.  
Крест. Влад. из. 1902 г.

Բարձր դասին  
պատկանողնե-  
րի կալուածք-  
ներում: Այն անձանց  
կալուածքնե-  
րում, որոնք  
բարձր դասին  
չեն պատկա-  
նում:

		ԲՈՒԲ.	Կ.	ԲՈՒԲ.ԼԻ
<b>5. Նուխու գաւառ</b>				
Տնատեղեր		5	—	—
1.	Այգ. առաջին կարգի (տես Արէշի գ.)	85	—	—
2.	Այգ. երկրորդ կարգի ( « » » )	45	—	40
Զբոսի վարելահո- ղեր	} տափար. դօտ. 1 կար.	45		40
		42		37
		42		37
Անջրդի վարելա- հողեր	} նախընթ. դօտ. 1 կար	25		20
		21		16
		21		16
Խոտատեղեր	} Զբոսի	22		17
		17		12
<b>6. Զանգեզուրի գաւառ</b>				
Տնատեղեր		5	—	—
1.	Այգ. առաջին կարգի (տես Արէշի գ.)	69	—	—
2.	Այգ. երկրորդ կարգի ( « » » )	37	—	32
Զբոսի վարելահո- ղեր	} 1 կարգի	37		32
		32		27
Անջրդի վարելա- հողեր	} 1 կարգի	24		19
		22		17
		21		16
Խոտատեղեր	} Զբոսի	20		15
		15		10

Նահանգի, գաւառի եւ գնուելիք հողերի տեսակների անունները

Գնման արժէքը մի դեսեա-  
տինի այն կալուածքներում  
որոնք ենթակայ են 548.  
666 օրէնսդէտերին: Пол.  
Крест. Влад. из 1902 г.

Բարձր դասին  
պատկանողնե-  
րի կալուածք-  
ներում: Եյն անձանց  
կալուածքնե-  
րում, որոնք  
բարձր դասին  
չեն պատկա-  
նում:

		ԲՈՒԲ.	Կ.	ԲՈՒԲ.
<b>7. Շուշու գաւառ</b>				
Տնտատեղեր		5	—	—
1.	Այգ. առաջին կարգի (տես Արէշի գ.)	59	—	—
2.	Այգ. երկրորդ կարգի ( « « »	32	—	27
Զբոսի վարելահողեր	I դասու 1 կարգի .	32	—	27
	I « 2 »	32	—	27
	II « 1 »	28	—	23
Անջրգի վարելահողեր	I դասու . . . . .	21	—	16
	II « . . . . .	25	—	20
	III « . . . . .	22	—	17
Խոտատեղեր	Զբոսի	15	—	10
	անջրգի	14	—	9
<b>8. Ղազախի գաւառ</b>				
Տնտատեղեր		2	50	—
1.	Այգ. առաջին կարգի (տես Արէշի գ.)	54	50	—
2.	Այգ. երկրորդ կարգի ( « « »	28	50	26
Զբոսի վարելահողեր	1 կարգի	28	50	26
	2 «	26	50	26
Անջրգի վարելահողեր	1 կարգի	22	50	24
	2 «	20	50	20
	3 «	19	50	18
Խոտատեղեր	Զբոսի	17	50	15
	անջրգի	12	50	10